# ԿԱՐԵՎՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՁԵՐ 2026 ԱՆԴԱՄԻ ՏԵՂԵԿԱԳՐՔՈՒՄ. Գենդերային ինքնության հաստատմանն ուղղված որոշակի խնամք

Սկսած 2026 թ. հոկտեմբերի 13-ից՝ Medi-Cal-ը չի վճարելու գենդերային դիսֆորիայի բուժման նպատակով տրամադրվող գենդերային ինքնության հաստատմանն ուղղված խնամքի համար, եթե այն տրամադրվում է 18 տարեկանից փոքր Medi-Cal-ի անդամներին և 19 տարեկանից փոքր CHIP ծրագրի անդամներին: Այս փոփոխությունը պայմանավորված է նոր դաշնային օրենքով:

Ծառայություններ, որոնց վրա ազդում է այս փոփոխությունը՝

- Վիրահատություններ, օրինակ՝ կրծքագեղձերի հեռացում կամ մեծացում
- Սեռական հասունացման արգելակիչներ
- Հորմոնային թերապիա, օրինակ՝ ստրոգեն կամ տեստոստերոն

Սա չի նշանակում, որ Դուք չեք կարող խնամք ստանալ: California-ն աջակցում է բժշկական տեսանկյունից անհրաժեշտ խնամքի հասանելիությանը: Նահանգը կօգտագործի նահանգային միջոցները Medi-Cal-ի և CHIP-ի անդամների համար բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, գենդերային ինքնության հաստատմանն ուղղված խնամքի ծախսերը հոգալու նպատակով, եթե այդ խնամքը կլինիկական տեսանկյունից նպատակահարմար է և առաջարկվել է համապատասխան որակավորում ունեցող մատակարարի կողմից:

California-ի Առողջական խնամքի հասանելիության և տեղեկատվության բաժինը (HCAI) կվճարի այս ծառայությունների համար: Այս ծրագիրը գործում է Medi-Cal-ից առանձին, որի վերահսկողությունն իրականացնում է Առողջական խնամքի ծառայությունների բաժինը (DHCS): Լրացուցիչ տեղեկությունները կհրապարակվեն HCAI-ի և DHCS-ի կայքերում, երբ դրանք հասանելի դառնան:

Medi-Cal-ը կշարունակի վճարել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ, գենդերային ինքնության հաստատմանն ուղղված խնամքի այլ ծառայությունների համար, որոնք տրամադրվում են 18 տարեկանից փոքր Medi-Cal-ի անդամներին և 19 տարեկանից փոքր CHIP ծրագրի անդամներին: Դրանք ներառում են բժշկի այցելությունները, լաբորատոր անալիզները, խոսքի թերապիան և հոգեթերապիան, եթե դրանք բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են:

Medi-Cal-ը նաև կշարունակի ապահովագրել բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունների, այդ թվում՝ վերը թվարկված ծառայությունների ծախսերը, եթե դրանք տրամադրվում են գենդերային դիսֆորիայից բացի այլ առողջական վիճակի բուժման կամ նախորդ միջամտության հետևանքով առաջացած կամ սաստկացած բարդության, վարակի, վնասվածքի, հիվանդության կամ խանգարման բուժման նպատակով: Medi-Cal-ը կշարունակի վճարել վերը թվարկված ծառայությունների համար 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամների համար:

Եթե դուք ներկայումս ստանում եք նշված ծառայություններից մեկը՝

- Ձեր Medi-Cal-ի կառավարվող խնամքի ծրագիրը կկապվի Ձեզ հետ, եթե այս փոփոխությունն ազդի 2026 թ. հոկտեմբերի 13-ին կամ դրանից հետո որևէ ծառայության տրամադրման հաստատման վրա:
- Եթե Ձեր ծրագիրը դադարեցնի կամ կրճատի նախկինում հաստատված ծառայությունը, Դուք կստանաք գրավոր «Գործողության ծանուցագիր»: Ծանուցման մեջ կբացատրվեն դրա պատճառը, ինչպես նաև որոշումը բողոքարկելու և Նահանգային լսում պահանջելու Ձեր իրավունքները:
- Կախված Ձեր իրավիճակից՝ Դուք կարող եք պահպանել նպաստներ ստանալու Ձեր իրավունքը մինչև բողոքարկման կամ Նահանգային լսման ավարտը:

Հարցերի կամ օգնության համար.

- Զանգահարեք Blue Shield Promise-ի Հաճախորդների սպասարկման բաժին՝ 1-800-605-2556 (TTY 711) հեռախոսահամարով:
- Դուք կարող եք նաև Ձեր բուժման և առկա տարբերակների մասին խորհրդակցել Ձեր առողջական խնամքի մատակարարի հետ:
- HCAI ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունները կհրապարակվեն, երբ դրանք հասանելի դառնան:

Խնդրում ենք այս ծանուցումը պահել Ձեր 2026 Անդամի տեղեկագրքի/ Ապահովագրության ապացույցի հետ միասին: Այն թարմացնում է գենդերային ինքնության հաստատմանն ուղղված խնամքի ծառայությունների վերաբերյալ բաժինը՝ սկսած 2026 թ. հոկտեմբերի 13-ից: